Մեր Մատենադարանին ունեցած Լեհացւոյ տպագրութեան օրինակին սկիզբը կը գտնուի թղթիկ մը, ուր մեր Հ. Բառնաբաս Եսայեան մի առ մի նշանակեր է Եւսեբիոսի մօտ գտնուած պատառիկներուն ու Լեհացւոյ օրինակին միջև իր կատարած համեմատութեանց էջերը, յայտարարելով վերջնոյս համար՝ թէ «գրեթէ նովին շարադրութեամբ նախնեաց» առեր է։

Գերյարգելի և Գերամեծար Տեառն Տեառն Ստեփանոսի Աստուածաբանութեան Վարդապետի և մեծի աբբայիդ ողջոյն կարօտանաց

... Ունիմք ի ձեռին պատրաստ զգործն բոլոր իբր թարգմանեալ՝ յովսեպոսի փլաւիանոսի եբրայեցւոյն. և զայս գիրքս վաճառական ոմն հայ կամի տպագրութեամբ ի լոյս ածել, և զբոլոր ծախսն ինքն կամի առնել. և յետ տպելոյն զհազար գիրք. զհինգ հարիւրն շնորհելոց է էջմիածնայ, և զհինգ հարիւրն երուսաղեմայ։ Գիրքն ի ձեռին իմում է, և հաճոյից իմոց թողեալ էջմիածնայ նուիրակն և երուսաղեմայ. կամէին զգիրք զայս յղել ի ամսդէրտամ, և նոր տառիւք տպել. որպէս և զօրինակսն տառից փոքերց գտանես ի սոյն քարտիզիս, զորոց և զխոշորսն ունի պարոն առաքելն ի ամսդէրտամ։ Եւ ես զառաջինն ի տեսանելն զտառսն հաւանեալ յոյժ՝ կամեցայ յղել անդ զգիրքն, բայց ապա բարւոք զմտաւ ածեալ՝ ասեմ. սա միանգամ է տպելոց, և ի մէջ ազգի մեծ յիշատակ լինելոց։ Ի ամսդէրտամ ոչ գոյ այր հմուտ և բանիբուն՝ յապաւել զգիրքն ի սխալանաց տպագրութեան կարող. գուցէ բազում սխալանք անցցեն, և գիրքն անօգուտ լինիցի։ Վասն որոյ կոչեցի զվերակացուն այսր գրքոյս, և զմիտս իմ յայտնեցի նմա, և նա էջմիածնայ նուիրակին. յորմէ և ամենայն վարդապետք իմացեալ՝ ուրախ եղեն, և կամեցան թէ այնպէս լինիցի։ Մանաւանդ և գրեցաւ յէջմիածին։ Արդ՝ եթէ կամիցիք՝ զայս ասեմ համառօտիւ՝ յղեցից զգիրքս զայս առ ձեզ. և աւետարանի մեկնչի տառիւք տպեսջիք. ունի գիրքն երկու հարիւր քսան և ութ պատկերս գեղեցիկս յոյժ, զորս և կամիմք, զի ի քէրխանան ցուքքիյի ի նորոյ փորեսցին, որպէս և պատկերք ձերոց աստուածաշնչին...։

Գրեցաւ ի հոկ. 20
1760 [Կ. Պոլիս]

Նուաստ ծառայ
Աթանաս վարդապետ անարժան եպիսկոպոս
[Մերասեան]

ՍԼԲ.

Մելգոնեան տեղեկութիւն մը կու տայ «զարիտան փաւլօ մարաշի» անուն «զուրսանտ»ի վրայ առ Հ. Մ. Անանեանց։

Վերապատուելի Տեառն Հ. Մկրտիչ վարդապետին ողջոյն սիրոյ ի տէր

... Անուանի զուրսանտ մի իշկեաւօն ազգաւ անուն զաբիտան փաւլօ մարաշի, որ երկերիւր ընտիր իշկեավօնաւ ի ծովու առնէր զզուրսանտութիւն դրօշակաւ մալթէզի ընդդէմ տաճկաց։ Սա յետ առնելոյ զայս արուեստ զամս մեծասան [մեռասան?] ի սոսկումն տաճկաց և փարփարոսաց, մինչև երբեմն թագաւորի տաճկաց կոչել զսա ի ծառայութիւն իւր խոստմամբ մեծութեան. և միանգամ ևս ինկիլիզի թագաւորին կոչեալ զսա յիւր ծառայութիւն. և սորա յանձն չառեալ. հուսկ յետոյ ձանձրացեալ յայնմ պաշտօնէ առանձնանայ ի մանեօթս. և գրէ գիր քէօրֆէզի ճեներալին, տալ ինքեան զներումն. (զի յանցաւոր էր սոցա, զի ընդդէմ կամաց սոցա առնէր զայն արուեստ) զի դարձցի յերկիր իւր առ ընտանիս իւր. և ճէնէրալն գրէ առ Սինաթօն, և սինաթօն յօժարակամ ներեալ կոչեաց անմիջապէս ի Վէնէտիկ առանց գնալոյ ի տուն իւր, և այժմ ի նազարէթն է